


ԻՊԱՍ զեկույց . Կադաստրի  
կոմիտեի դեմ դատական  
գործերի ուսումնասիրություն



Կադաստրի  
կոմիտե

Երևան, 2021թ.



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

*Սույն զեկույցի հեղինակներն են՝ Լուիզա Հովհաննիսյանը, Նինա Հակոբյանը:*

*Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են Արմինե Հակոբյանը, Կարինե Ավանեսյանը, Լիլիթ Գալստյանը, Լուիզա Հովհաննիսյանը և Վանատուր Շերենցը:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓԱԳԻՐ.....	4
1. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.....	6
2. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ.....	16
3. Կարճման որոշումներ.....	33
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	36

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից մինչև 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ կադաստրի կոմիտեի դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 61 վճիռներից 53-ը և 55 կարճված գործերից 36-ը:

Դիտարկված գործերից 28-ով հայցերն ամբողջությամբ բավարարվել են (53%), 23-ով՝ մերժվել (43%), 2-ով բավարարվել են մասնակի (4%): Ստացվում է, որ դիտարկված գործերից կեսից ավելիի մասով դատարանը հաստատել է վարչարարության հետ կապված խնդիրներ:

Բավարարված գործերի մեծ մասով հայցերը ներկայացված են եղել պարտավորեցման հայցատեսակի շրջանակներում և պարտավորեցրել են Կադաստրի կոմիտեին՝ գրանցելու հայցվորների սեփականության իրավունքը: Գրեթե բոլոր գործերով պատշաճ վարչարարության խնդրին զուգահեռ առկա է եղել նաև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի խնդիրը (77%), մի քանի գործերով՝ սեփականության իրավունքի տարրերից մեկի՝ օգտագործման իրավունքի խնդիրը, որոնք պայմանավորված են եղել Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվող գործառույթների առանձնահատկություններով:

Ընդ որում, հաշվի առնելով Կոմիտեի իրականացրած վարչարարության առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ Կոմիտեն վարչական ակտերը կայացնում է բացառապես իրավահաստատող փաստաթղթերի հիման վրա, վարչարարության խնդիրները կապված են եղել ոչ թե որևէ նորմի տարրնկալման կամ այլ ձևով մեկնաբանման կամ բովանդակային առումով վերլուծություն պահանջող խնդիրների հետ, այլ Կադաստրի կոմիտեի «անուշադրության», փաստաթղթերի ոչ պատշաճ ուսումնասիրության, ձևական պահանջների չարաշահման սկզբունքի խախտման հետ:

ՀՀ կադաստրի կոմիտեի դեպքում համընդհանուր է եղել վարչարարության օրինականության սկզբունքի խախտումը, որը դրսևորվել է ինչպես վարչական մարմնի կողմից գործող օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները չիրականացնելով, այնպես էլ գործող օրենսդրությամբ չնախատեսված լիազորություններն իրականացնելով:


Գործերի մեծ մասով Կադաստրի կոմիտեն ոչ իրավաչափորեն անձի առջև օրենքով չնախատեսված պարտականություններ է առաջադրել (փաստաթղթերի ներկայացման պահանջ)՝ հաշվի չառնելով ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և կասկածի տակ դնելով վարչական մարմինների և դատարանների կողմից կայացված փաստաթղթերը:

Կադաստրի կոմիտեի կողմից ավելի քիչ խախտումներ կարձանագրվեն այն դեպքում, երբ վարչական մարմինը բոլոր վարույթներով իրականացնի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն: Այդպիսով վարչական մարմինը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պահանջվող իրավահաստատող փաստաթղթերի շրջանակից դուրս չի գա, ինչպես նաև կասկածի տակ չի դնի իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտերը և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ինչպես նաև իրավունքի գրանցման վարույթի համար հիմք հանդիսացող դիմումն ընդունելուց հետո, նախկինում ներկայացված վարույթում առկա փաստաթղթերը, կադաստրային գործը պատշաճ ուսումնասիրության ենթարկելու պարագայում, դատարանի մատնանշած սխալները բազմիցս չեն կրկնվի, քանի որ Կոմիտեի համար ակնհայտ կլինի այն պարզ հանգամանքը, որ նախկինում միննույն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարվել են հենց նույն քարտեզի կամ հատակագծի հիմքով, ուստի անձին լրացուցիչ, օրենքով չնախատեսված փաստաթղթեր ներկայացնելու պարտականություններ առաջադրելն առնվազն ոչ իրավաչափ է:

Ստացվում է, որ գործերի մեծ մասով պարզապես խնդիրներ չեին առաջանա վարչական մարմնի կողմից փաստաթղթերի բազմակողմանի ուսումնասիրության և ոչ կադաստրված մոտեցումների արդյունքում, իսկ Կադաստրի կոմիտեն ստիպված չէր լինի պետական բյուջեից հատուցելու դատական ծախսերը, որն ընդհանուր առմամբ 28 գործի համար կազմել է 456 000 ՀՀ դրամ:

## 1. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև Կոմիտե) դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 61 վճիռներից 53-ը և 55 կարճված գործերից 36-ը: Դիտարկված գործերից 28-ով հայցերն ամբողջությամբ բավարարվել են (52,8%), 23-ով՝ մերժվել (43,4%), 2-ով բավարարվել են մասնակի (3,8%):




### Դիտարկված գործերից՝

- 44-ը վերաբերել են անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցմանը,
- 1-ը՝ անշարժ գույքի հողամակերեսի վերաբերյալ ուղղումներ կատարելուն,
- 1-ը՝ առուվաճառքի պայմանագրում վրիպակն ուղղելուն,
- 1-ը՝ որակավորման վկայականի գործողությունը կասեցնելու խնդրին,
- 1-ը՝ հողամասի տվյալները կադաստրային քարտեզում չտեղադրելու գործողությունը ոչ իրավաչափ և պետական գրանցումն անվավեր ճանաչելու խնդրին,
- 1-ը՝ կարգապահական տույժի նշանակմանը,
- մնացածը՝ պետական գրանցման իրավաչափության հետ կապված այլ խնդիրներին:

Դիտարկված գործերն առնչվել են մարդու իրավունքների հետևյալ խնդիրներին՝ պատշաճ վարչարարության իրականացում, սեփականության իրավունք, լաված լինելու իրավունք: Սեփականության իրավունքի խախտումը՝ 96%-ի դեպքում, լաված լինելու իրավունքի խնդիրը՝ գործերից միայն 2-ի դեպքում, այն էլ՝ սեփականության իրավունքի խնդրին զուգահեռ: Վերջինը հասկապես շոշափվել է վարչական վարույթին երրորդ անձին՝ նախկին սեփականատիրոջը, մասնակից չդարձնելու գործերով:

Դիտարկված գործերից 26-ով (49%) հայցը քննվել է պարտավորեցման հայցատեսակի, 22-ով (41,5%)՝ վիճարկման, 4-ով (7,5%)՝ ճանաչման, 3-ով (6%)՝ գործողության կատարման հայցատեսակի շրջանակներում:




Դիտարկված գործերից 26-ով (49%) Պատասխանողին պարտավորեցվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունք գրանցել, իսկ գործերի մյուս՝ գերակշիռ մասով վիճարկվել են իրավունքների պետական գրանցումները:

Գրեթե բոլոր բավարարված գործերը քննվել են պարտավորեցման հայցի շրջանակներում: Կարելի է եզրահանգել, որ իրավունքի պետական գրանցում իրականացնելու վարույթներում Կոմիտեն ավելի շատ ոչ իրավաչափորեն մերժում է պետական գրանցման դիմումները, քան օրենքի խախտմամբ գրանցում է հայցվող իրավունքը, քանի որ, ի տարբերություն պետական գրանցում կատարել պարտավորեցնելու վերաբերյալ գործերի, արդեն իսկ կատարված գրանցումների վիճարկման հայցերի մեծ մասը մերժվել են: Բացի այդ, դեպքերի մեծ մասով վիճարկման հայց ներկայացնելու գլխավոր նպատակ է հանդիսանում վարչական ակտի գործողությունը կասեցնելը, ուստի նման հայցեր ներկայացնելը հաճախ իրավունքի խախտման հետևանք չէ:

Դիտարկված գործերից երեքով տեղի է ունեցել դատավորի փոփոխություն<sup>1</sup>: Փոփոխությունը պայմանավորված է եղել հայցադիմումը վերադարձվելուց հետո կրկին ներկայացնելու պարագայում այլ դատավորին մակագրելով, դատավորի ժամանակավոր անաշխատունակության մեջ, ինչպես նաև ամենամյա արձակուրդում գտնվելու պատճառով:


Դիտարկված գործերից 47-ով (89%) Հայցվորը եղել է ֆիզիկական անձ, 4-ով (7,5%)՝ առևտրային կազմակերպություն, իսկ 2 գործով (4%)՝ անհատ ձեռնարկատեր:

<sup>1</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/6559/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809923144](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809923144), ՎԴ/6080/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936366](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936366); ՎԴ/5744/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936027](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936027)



Հայցվորները դիտարկված 53 գործից 27-ով (51%) ունեցել են փաստաբան ներկայացուցիչ, 5 գործով ներկայացուցչի փաստաբան լինելու վերաբերյալ վճռում որևէ նշում կատարված չի եղել, սակայն ներկայացուցչի անունն առկա է եղել ՀՀ փաստաբանների պալատի կայքում, 6-ի դեպքում էլ ներկայացված է եղել օրինական ներկայացուցչի կողմից, գործերից 2-ով Հայցվորներն ունեցել են այլ տեսակի ներկայացուցիչ, 12 գործերով հայց ներկայացրած ֆիզիկական անձինք ներկայացուցիչ չեն ունեցել, իսկ գործերից միայն մեկով Հայցվորի ներկայացուցիչը եղել է հանրային պաշտպան: Ընդ որում, 26 բավարարված գործերով Հայցվորներն ունեցել են փաստաբան կամ այլ տեսակի ներկայացուցիչ, իսկ 11 գործերով, որոնցով Հայցվորը հանդես է եկել փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով, հայցերը մերժվել են: Ընդ որում 12 գործերից, որոնցով անձինք որևէ կերպ դատարանում ներկայացված չեն եղել դատարանում, 9 հայցերը մերժվել են, և միայն 3-ը՝ բավարարվել ամբողջությամբ:

Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով գործի քննությանը մասնակցել է դիտարկված գործերից 46-ով (87%), չի մասնակցել 2 գործով, իսկ գործերից 5-ով (9%) պարզ չէ՝ արդյո՞ք Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել է դատաքննությանը, թե ոչ, քանի որ այդ մասին դատական ակտում որևէ նշում կատարված չի եղել:




46 գործերից 18-ի պարագայում հայցը մերժվել է, 26-ի պարագայում՝ բավարարվել ամբողջությամբ, իսկ 2-ի դեպքում՝ բավարարվել մասնակի: 2 գործերը, որոնցով հայցվորը որևէ



կերպ չի մասնակցել դատավարությանը, հայցերը մերժվել են: 5 գործերից, որոնցով տվյալ չկա՝ արդյոք անձինք մասնակցել են դատավարությանը, թե՛ ոչ, 2-ի պարագայում հայցը բավարարվել է ամբողջությամբ և 3-ի դեպքում՝ մերժվել:

Միննույն ժամանակ Պատասխանողը գործերից գրեթե կեսից ավելիի դեպքում՝ 30 գործով (57%) ապահովել է ներկայությունը գործի քննության ժամանակ: Գործերից 14-ի դեպքում Պատասխանողը չի ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը դատաքննությանը, որոնցից 9-ով հայցադիմումները բավարարվել են ամբողջությամբ, իսկ 5-ով՝ մերժվել:



Դիտարկված գործերից միայն 1-ով ո՛չ հայցվորը, ո՛չ էլ պատասխանողը չեն ապահովել ներկայությունը դատական նիստերին<sup>2</sup>: Ընդ որում, տվյալ գործով հայցը մերժվել է, գործը քննվել է արագացված դատաքննության կիրառմամբ, քանի որ հայցն ակհայտ անհիմն է եղել, մասնավորապես վարչական ակտի անվավերության հիմքում Հայցվորը փաստարկել էր պետական գրանցման համար հիմք հանդիսացած՝ Երևան համայնքի կողմից կայացված վարչական ակտի առոչինչ լինելը:

Հատկանշական է, որ դիտարկված գործերից 49-ով (92,5%) դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան կամ այլ տեսակի առարկություն, մասնավորապես՝ 24 գործով ներկայացվել է գրավոր առարկություն, 22-ով՝ հայցադիմումի պատասխան, իսկ 8 գործով Պատասխանողը դատական նիստի ընթացքում ներկայացրել է բանավոր առարկություններ:

Ընդ որում, պատասխանողի կողմից ներկայացված առարկությունները հիմնականում եղել են այն նույն հիմնավորումները, որոնք ընկած են եղել կայացված վարչական ակտի հիմքում, մասնավորապես պատասխանողն առարկության հիմքում նշել է, որ չեն ներկայացվել համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը, ինչը հաստատում է, որ պատասխանողը հայցվորների ոչ բոլոր փաստարկների դեմ է ներկայացնում հակափաստարկներ և ըստ էության չի անդրադառնում ներկայացված հայցի հիմքերին: Բոլոր

<sup>2</sup> Տե՛ս գործ ՎԴ/2031/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931974](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931974)

4 գործերով, որոնցով պատասխանողը որևէ առարկություն կամ դիրքորոշում չի ներկայացրել, հայցերը բավարարվել են: Մասնավորապես, գործերից 1-ով<sup>3</sup> հայցը բավարարվել է օրինական ուժի մեջ մտած վճիռը Կոմիտեի կողմից անտեսելու հիմքով, գործերից 1-ով<sup>4</sup> նույն կերպ օրինականության սկզբունքը խախտվել է, քանի որ Դատարանն արձանագրել է, որ Կոմիտեն անտեսել է քաղաքապետի որոշումը որպես իրավահաստատող փաստաթուղթ, որի հիման վրա պետք է իրականացվեր իրավունքի պետական գրանցումը: Բավարարված գործերից 1-ով<sup>5</sup> Դատարանն արձանագրել է, որ ՀՀ կադաստրի կոմիտեն իրավասու չէր Ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի արձանագրության քաղվածքի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ գրանցել ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, քանզի իրավունքի պետական գրանցման պահին այն չի հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ: Իսկ գործերից 1-ով<sup>6</sup> Դատարանն արձանագրել էր, որ քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի գործողության կասեցման հիմքերին առնչվող բոլոր հանգամանքները բացահայտելու, պարզաբանելու, համապատասխան ապացույցներով հիմնավորելու (համակողմանիության ու լրիվության ապահովում) և ըստ դրա՝ իրավաչափ որոշում ընդունելու համար անհրաժեշտ էր, որպեսզի վարչական մարմինն ապահովեր ՀՀ-ում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական ունեցող անձի մասնակցությունը գործի քննությանը:

Գործերից 16-ով (30%) հայցվորը ներկայացրել է դատարան դիմելու բացթողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն: Դրանցից 9-ը բավարարվել է, 4-ը՝ թողնվել է դատական նիստում քննության: Որպես բացթողնված ժամկետը հարգելի համարելու հիմք հայցվորը նշել է վիճարկվող գրանցման կամ դրա հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթի ընդունման մասին (օրինակ՝ համայնքի ղեկավարի որոշում) տեղեկացված չլինելը, իսկ հակառակը հերքող ապացույց գործում առկա չի եղել: Դատարանն էլ իր հերթին հաշվի առնելով, որ անձի մոտ իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող վարչական ակտի դեմ դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն ծագում է այն պահից, երբ իրազեկվել է իր իրավունքներին ենթադրաբար միջամտող վարչական ակտի գոյության մասին, և նկատի ունենալով, որ վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվելուց հետո հայցվորը դատական պաշտպանության է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում, հավասարակշռելով դատարանի մատչելիության և իրավական որոշակիության շահերը՝ գտել է, որ բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման, իսկ միջնորդությունը բավարարման:

<sup>3</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/7538/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809924145](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809924145)

<sup>4</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ5/0191/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941265](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941265)

<sup>5</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ5/0042/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809944127](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809944127)

<sup>6</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/8362/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938789](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938789)

Դիտարկված գործերից 13-ի դեպքում հայցը վերադարձվել է, ընդ որում, 2 գործով այն վերադարձվել է երկու անգամ. 1-ին անգամ հայցադիմումը վերադարձվել է, քանի որ պահանջներից մեկը ըստ էության պետք է քննվեր առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանում, իսկ մյուս պահանջը հստակ չի եղել, մասնավորապես պարզ չի եղել, թե որն է ածանցյալ պահանջ, իսկ որը հիմնական և ինչ է ակնկալել Հայցվորը, իսկ 2-րդ անգամ վերադարձ է արվել, քանի որ Հայցվորը ըստ էության չի վերացրել դատարանի մատնանշած թերությունները<sup>7</sup>: Ընդ որում, նշված գործով Հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել: Հայցադիմումները վերադարձվել են հետևյալ հիմնավորումներով.

- 6 գործով կցված չեն եղել պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը կամ վիճարկվող վարչական ակտը կամ դրա պատճենը,
- 6 գործով հայցի հիմքի առարկայի, հայցատեսակի փոփոխությունը մատնանշած լինելու հիմքով,
- 1 գործով ներկայացված չի եղել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն,
- 1 գործով հայցադիմումը ստորագրված չի եղել կամ այն ստորագրել է դրա լիազորությունը չունեցող անձը:

Վերադարձի դեպքում Հայցվորի գործողությունները բոլոր դեպքերում եղել են սահմանված ժամկետում մատնանշված թերություններն ուղղելը և կրկին ներկայացնելը, բացի վերը նշված 2 անգամ վերադարձված գործից, որի դեպքում Հայցվորը թերություններն առանց շտկելու 2 անգամ կրկին ներկայացրել է հայցը:

Դիտարկված գործերից 3-ով հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտավորությունից: Գործերից 1-ով հայցվորը եղել է սնանկության գործով կառավարիչ, որը օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտականությունից<sup>8</sup>, գործերից 1-ով հայցվորն ազատված է եղել՝ անգործունակ լինելու հիմքով, իսկ 1-ով ընդհանրապես նշված չի եղել, թե ինչ հիմքով է ազատված եղել պետական տուրքը վճարելու պարտականությունից<sup>9</sup>:

Դիտարկված գործերից 2-ով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու, 2-ով՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն: Ներկայացված բոլոր միջնորդությունները բավարարվել են: Գործերից մեկով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է՝ հաշվի առնելով հայցվորների

<sup>7</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1876/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931808](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931808)

<sup>8</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1554/05/20, <http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative>

<sup>9</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1554/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943841](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943841)

փաստարկն առ այն, որ կերակրողին կորցնելու հիմքով ստանում են չնչին զինվորական կենսաթոշակ, այլ եկամուտներ չունեն<sup>10</sup>: Մեկ այլ դեպքում նման միջնորդությունը բավարարվել է՝ հիմք ընդունելով հայցվորի պնդումն առ այն, որ անգործունակ է, ինչը հաստատվել է համապատասխան տեղեկանքով<sup>11</sup>: Ինչ վերաբերում է պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդություններին, մեկ գործով միջնորդությունը բավարարվել է դատարանի կողմից՝ հիմքում պարզապես դնելով անձի արդարադատության մատչելիության իրավունքը<sup>12</sup>: Մեկ այ գործով պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը բավարարվել է՝ հիմքում դնելով հայցվոր ՄՊԸ-ի հիմնավորումն առ այն, որ ընկերությունը ստեղծվել է տասը ամիս առաջ, փորձում է գործունեություն իրականացնել սահմանամերձ գյուղում և ֆինանսապես տուժել է պատասխանողի անգործության արդյունքում, ինչը, ըստ դատարանի որոշման, հաստատվել է համապատասխան տեղեկանքով<sup>13</sup>:

Դիտարկված գործերից 7-ով Հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջնորդություններ: Ընդհանուր առմամբ ներկայացված միջնորդություններից միայն մեկն է բավարարվել, որի վերաբերյալ որոշումը տեղադրված չի եղել համակարգում<sup>14</sup>: Միջնորդություններից մեկով վիճարկման հայցի շրջանակներում էր հայցվորը պահանջել հայցի ապահովում<sup>15</sup>, իսկ մնացածով չի հիմնավորել հետագայում դատական ակտի կատարման դժվարությունը կամ անհնարինությունը<sup>16</sup>: Գործերից մեկով Դատարանը նշել է, որ ներկայացված միջնորդությունը պետք է պարունակի երկու պարտադիր պայմաններից առնվազն մեկի հիմնավորումը, այսինքն՝ հայցվորը պետք է ներկայացնի հիմնավոր պատճառաբանություն, որ հայցի ապահովման միջոց չձեռնարկելն անհնարին կդարձնի կամ կդժվարեցնի դատական ակտի կատարումը, մինչդեռ միջնորդությամբ հայցվորը չի հիմնավորել, թե նման միջոց չկիրառելու պայմաններում ինչը կարող է անհնարին դարձնել կամ դժվարեցնել դատական ակտի կատարումը, իսկ այն փաստը, որ հայցվորը ներկայումս պետք է օգտվի իր գույքից, չի կարող հիմք հանդիսանալ հայցի ապահովման միջոց կիրառելու և հայցվորի պահանջի ժամանակավոր բավարարման համար, քանի որ հայցվորի պահանջի իրավաչափությունը դեռևս քննարկման առարկա պետք է դառնա, և Դատարանն իր վերջնական գնահատականը պետք է տա գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս:

36 գործերով դատավարությանը ներգրավված է եղել նաև երրորդ անձ, որից 17-ի դեպքում դատարանի որոշումը հասանելի չի եղել դատալեքսում: Երրորդ անձինք գործերից 33-ի դեպքում ներգրավվել են դատարանի նախաձեռնությամբ, իսկ մնացած 3 դեպքերում՝ իրենց դիմումի հիման վրա: Ընդ որում, երրորդ անձ ներգրավելու դատարանի հիմնավորումը եղել է

<sup>10</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1876/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931808](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931808)

<sup>11</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/6080/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936366](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936366)

<sup>12</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/11365/05/18, [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809928307](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928307)

<sup>13</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ2/0038/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943272](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943272)

<sup>14</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/7538/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809924145](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809924145)

<sup>15</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/6710/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937044](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937044)

<sup>16</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/11245/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941826](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941826)

այն, որ գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտը կարող է տարածվել երրորդ անձի (հիմնականում գույքի նկատմամբ գրանցված սեփականատիրոջ) վրա և շոշափել վերջինիս իրավունքները, հետևաբար՝ Դատարանը եզրակացրել է, որ անհրաժեշտ է տվյալ անձին գործով դատավարության մեջ ներգրավել՝ որպես երրորդ անձ:


Գործերից 20-ի դեպքում (55,6%) երրորդ անձը չի մասնակցել դատավարությանը, 19-ի դեպքում նույնիսկ չի հայտնել որևէ դիրքորոշում հայցի վերաբերյալ:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել է 3 նիստ (19 գործ 35,8%-ի դեպքում), ներառյալ՝ վճռի հրապարակումը, 2 նիստ՝ 10 գործով, 4 նիստ՝ 9 գործով, 5 գործով տեղի է ունեցել 5 նիստ, 10 գործով՝ 5-ից ավելի նիստ:

Նախնական նիստեր նշանակվել են գործերից 36-ով (68%-ով):

Դիտարկված ժամանակահատվածում 5 չկայացած նիստերի հիմնական պատճառը եղել են արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումները, 1 նիստի դեպքում դատական նիստերի դադարում Ֆեմիդա համակարգը սարքին չի եղել, 1-ի դեպքում դատավորը վատառողջ է եղել, 1 գործով դատավորը մասնակցել է ԲԴԽ-ում հարցազրույցի, 1 գործով՝ այն պատճառով, որ այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես դատավարության մասնակիցներից որևէ մեկի, վկաների, փորձագետների, թարգմանիչների բացակայության պատճառով, 1 գործով՝ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, 1 գործով՝ դատավորի անաշխատունակ լինելու պատճառով, իսկ 2-ի դեպքում՝ պատճառը դատավերքս համակարգում նշված չի եղել<sup>17</sup>: Ընդհանուր առմամբ ուսումնասիրված գործերով չի կայացել 12 դատական նիստ:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը տատանվել է 6 գործի պարագայում մինչև 3 ամիս, 3 ամսից մինչև 6 ամիս՝ 24 գործով, 6 ամսից մինչև 1 տարի՝ 18 գործով, և 1 տարուց մինչև մեկ տարի, 6 ամիս՝ 5 գործով:



<sup>17</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/7513/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937887](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937887); ՎԴ/0480/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930285](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930285)

Դիտարկված գործերից 3-ի դեպքում կիրառվել է արագացված դատաքննություն, որից 1-ի դեպքում հայցն ակնհայտ հիմնավոր է եղել, իսկ 2-ի դեպքում՝ ակնհայտ անհիմն: Ակնհայտ անհիմն լինելու հիմքով արագացված դատաքննություն կիրառելով՝ Դատարանը գտել է, որ չի հաստատվում վիճարկվող իրավունքի պետական գրանցումով Երևան համայնքին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելու փաստը: Մասնավորապես՝ ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելն իրենից ենթադրում է այնպիսի իրավունքի տրամադրում այն անձին, ով ակնհայտորեն նման իրավունքի կրող և իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանալ չի կարող: Տվյալ հիմքով մյուս գործով հայցվորը ներկայացրել էր վարչական ակտի առոչինչ լինելու պահանջ, սակայն Դատարանը գտել է, որ հայցվորը վարչական ակտի առոչնչությունը վիճարկելու հիմքում դնում է որոշակի հանգամանքներ և այդ հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա նորմերի սխալ մեկնաբանությունը, որոնք, անկախ դրանց հիմնավոր լինելու կամ չլինելու հանգամանքից, որևէ կերպ չեն կարող գնահատվել որպես վիճարկվող ակտում ակնառու և կոպիտ խախտման մասին վկայող փաստարկ, ուստի և ակտի առոչնչության գնահատման համար բավարար հիմք<sup>18</sup>: Մեկ այլ դեպքում Դատարանն արձանագրել է, որ Հայցվորի կողմից վկայակոչված փաստարկներով չի հաստատվում վիճարկվող իրավունքի պետական գրանցումով Երևան համայնքին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելու փաստը<sup>19</sup>: Մեկ այլ գործով<sup>20</sup> Դատարանը կիրառել է արագացված դատաքննություն՝ հայցն ակնհայտ հիմնավոր լինելու հիմքով, քանի որ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որի գոյությունը Կոմիտեն պետական գրանցման վարույթն իրականացնելիս հաշվի չի առել: Ընդ որում, դատարանների դիրքորոշումները տվյալ դեպքում տարբեր են, քանի որ ակնհայտ անհիմն կամ ակնհայտ հիմնավոր հայցեր հաճախ են հանդիպում, իսկ դատարանները հիմնականում չեն օգտնվում իրենց հայեցողական լիազորությունից և չեն կիրառում արագացված դատաքննություն:


Դիտարկված գործերից 28-ով (կամ բոլոր դիտարկված գործերի 53%-ով) վճիռը բողոքարկվել է, որից 21-ը հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից, 3-ը՝ Կոմիտեի, իսկ 3-ը՝ երրորդ անձի կողմից: Ընդ որում, բավարարված գործերից միայն 9-ի դեպքում է ներկայացվել վերաքննիչ բողոք, որոնցից 5-ի դեպքում բողոք ներկայացնողն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, իսկ բողոքներից 3-ը ներկայացված են եղել 3-րդ անձի կողմից: Մերժված գործերից 19-ի դեպքում բողոք ներկայացնելիս Հայցվորներն ունեցել են փաստաբան ներկայացուցիչ:

Գործերից մի մասում վճռում առկա են հղումներ ՀՀ Սահմանադրությանը (12 գործով), միջազգային պայմանագրերի /ՄԻԵԿ/ (2 գործով), ՄԻԵԴ նախադեպերի (2 գործով), Սահմանադրական դատարանի որոշումների (9 գործով), ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների (14 գործով), իսկ 53 գործով օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի:

<sup>18</sup> Տե՛ս գործ ՎԴ/11245/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941826](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941826)

<sup>19</sup> Տե՛ս գործ ՎԴ/2031/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931974](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931974)

<sup>20</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/2529/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932506](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932506)



Գործերից 2-ով Դատարանը գտել է, որ Հայցվորը շահագրգիռ անձ չի հանդիսանում հայցը ներկայացնելու համար և իր դիրքորոշումը հիմնավորել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով՝ *Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium* գործով<sup>21</sup>: Հիշյալ գործերով հիշատակվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի թիվ ՄԴՈ-906 որոշումը: Վարչական ակտը անտեսելու հետ կապված Դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշումը և արձանագրել, որ Պատասխանողը պարտավոր է կատարել իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը, այլապես, պատասխանողը, ի խախտումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշման, կասկածի տակ է դնում իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի բովանդակությունը՝ դրսևորելով ոչ իրավաչափ վարքագիծ<sup>22</sup>:

Իրավունքի պետական գրանցման համար նախատեսված 30-օրյա ժամկետը բաց թողնելու հետ կապված՝ Դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1448 որոշումը<sup>23</sup>:

Հանդիպել են նաև խնդիրներ՝ կապված դատալեքս տեղեկատվական համակարգի լրացման հետ, մասնավորապես համակարգում 17 գործով երրորդ անձ ներգրավելու մասին դատարանի որոշումը հասանելի չի եղել դատալեքսում, մի քանի գործերով հայցի ապահովումը բավարարելու վերաբերյալ որոշումը տեղադրված չի եղել, ինչպես նաև հաճախ հանդիպող խնդիր է Հայցվորի ներկայացուցչի վերաբերյալ նշում չկատարելը:

<sup>21</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/11915/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809928904](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928904);

ՎԴ/6559/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809923144](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809923144)

<sup>22</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/3765/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933873](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933873);

ՎԴ/4752/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934933](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934933)

<sup>23</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1554/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943841](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943841);

ՎԴ/0106/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942238](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942238), ՎԴ/6/0073/05/19,

[http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936871](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936871)

## 2. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ

Դիտարկված գործերից 25-ի դեպքում (58%) վիճարկվել է միջամտող վարչական ակտ, որից 2-ի դեպքում վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ:

Անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթների հիմքում ընկած են եղել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 29-րդ հոդվածները, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հիմքում ընկած է եղել նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը:

Դիտարկված գործերով արձանագրվել են մի շարք համակարգային բնույթ կրող վարչարարության իրականացման խնդիրներ, այդ թվում .

➤ **Օրինականության, վարչարարության համաչափության, հավաստիության կանխավարկածի սկզբունքների խախտում. լիազորությունների ոչ պատշաճ իրականացում**

Նշված խախտումը կարելի է ասել համընդհանուր է բոլոր գործերով, որը դրսևորվում է մի դեպքում վարչական մարմնի կողմից գործող օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները չիրականացնելով, մյուս դեպքում՝ գործող օրենսդրությամբ չնախատեսված լիազորություններն իրականացնելով: Տվյալ խախտումն անմիջականորեն կապված է նաև վարչական մարմնի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չապահովելու հետ, որը հանգեցնում է անձի՝ օրենքով երաշխավորված սեփականության իրավունքի չիրացմանը:

Հիշյալ խախտումը դրսևորվում է նաև այն դեպքերում, երբ վարչական մարմինը անտեսում է օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ իրավաբանական ուժ ունեցող և որևէ դատարանի կողմից չվիճարկվող վարչական ակտը: Ընդ որում, բավարարված գործերից մեծ մասով հանդիպել են նմանատիպ խնդիրներ, որի հետ կապված Դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները: Մասնավորապես, վարչական ակտը անտեսելու հետ կապված դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշումը և արձանագրել, որ պատասխանողը պարտավոր է կատարել իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը, այլապես, պատասխանողը, ի խախտումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշման, կասկածի տակ է դնում իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի բովանդակությունը՝ դրսևորելով ոչ իրավաչափ վարքագիծ<sup>24</sup>:

Իրավունքի պետական գրանցման համար նախատեսված 30-օրյա ժամկետը բաց թողնելու հետ կապված Դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1448

<sup>24</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/3765/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933873](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933873) ,  
ՎԴ/4752/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934933](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934933)



որոշումը: Նշված բոլոր գործերով Դատարանը սահմանադրական դատարանի որոշումների համատեքստում բավարարել է ներկայացված հայցերը:

Բավարարված գործերից մեծ մասով օրինականության սկզբունքի խախտումը հանգեցրել է ոչ իրավաչափորեն իրավունքի պետական գրանցման մերժմանը, քանի որ վարչական մարմինը գրանցումը չի իրականացնում իրավահաստատող փաստաթղթերի հիման վրա և անձից պահանջում է ներկայացնել օրենքով չնախատեսված փաստաթղթեր:

Հանդիպում են նաև դեպքեր, երբ վարչական մարմինը, մեկ անգամ կասեցնելով վարչական վարույթը, նշում է համապատասխան հիմքեր, իսկ երկրորդ անգամ նույն վարույթը կասեցնելուց հետո նշում է նախորդից տարբերվող այլ հիմքեր այն դեպքում, երբ նախկինում մատնանշված հիմքերը վերացված չեն էլ եղել Հայցվորի կողմից:

Օրինակ, գործերից մեկով<sup>25</sup> վարչական մարմնի կողմից մեկ անգամ կասեցվել էր դիմողի սեփականության իրավունքի պետական գրանցումը, որի հիմքերը չվերացնելու հանգամանքով պայմանավորված 30-օրյա ժամկետն ավարտվելուց հետո պետական գրանցման վարույթը դադարեցված է համարվել: Անձը կրկին դիմել է ՀՀ կադաստրի կոմիտե՝ նույն խնդրանքով, սակայն Կոմիտեն կրկին կասեցրել է պետական գրանցման վարույթը, ինչը չի բխել «Գույքի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Ընդ որում, առաջին կասեցմամբ վարչական մարմինը երկու հիմք է նշել, իսկ երկրորդ կասեցմամբ՝ կրկնել է երկու հիմքերից միայն մեկը՝ անհայտ թողնելով մյուս հիմքի ճակատագիրը: Հիմքերից մեկը վերաբերում էր նրան, որ վարչական մարմինը անտեսել էր ժողդատարանի վճիռը, որով ճանաչվել էր հայցվորի սեփականության իրավունքը, և դա հիմք ընդունելով՝ ՀՀ վարչական դատարանը մեկ այլ գործով անվավեր էր ճանաչել մյուս սեփականատիրոջ սեփականության իրավունքի պետական գրանցումը: Այսպիսով վարչական մարմինը պատճառաբանել էր, որ ՀՀ վարչական դատարանի վճռով ոչ թե ճանաչվել է հայցվորի սեփականության իրավունքը, այլ անվավեր է ճանաչվել տվյալ բաժնի նկատմամբ մյուս սեփականատիրոջ իրավունքը: Սակայն հաշվի չէր առել այն, որ նման պայմաններում դատարանը, բնականաբար, չէր կարող կրկին ճանաչել արդեն իսկ դատական ակտով ճանաչված հայցվորի սեփականության իրավունքը խնդրո առարկա անշարժ գույքի կեսի նկատմամբ: Մյուս փաստարկը վերաբերում է մինչև 01.01.1999 թվականը գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 344-րդ հոդվածով սահմանված եռամյա ժամկետի բացթողնմանը: Մինչդեռ այդ նորմն ակնհայտորեն վերաբերել է դատական ակտերի հարկադիր կատարմանը և որևէ կապ չունի պետական գրանցման վարույթում դատական ակտի հիման վրա իրավունք գրանցելու հետ: Կոմիտեն վկայակոչել է ակնհայտորեն ոչ վերաբերելի նորմ:

Նման պայմաններում Դատարանն արձանագրել է, որ պատասխանողը, նման ակնհայտ անհիմն փաստարկներով չգրանցելով հայցվորի սեփականության իրավունքը, կոպտորեն խախտել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 27-րդ

<sup>25</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/2529/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932506](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932506)

հողվածի 1-ին մասը և հայցվորի սեփականության սահմանադրական իրավունքը: Հիշարժան է, որ հայցվորը վարչական կարգով բողոքարկել է պատասխանողի ակնհայտ անհիմն որոշումները, սակայն ստացել է որևէ պատճառաբանություն չպարունակող, միաժամանակ իր դիմումը մերժող պատասխան: Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ղեկավարի տեղակալն ընդամենը նշել էր, որ որոշումներն իրավաչափ են, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով: Այն հանգամանքը, որ նման անբովանդակ և ակնհայտ անհիմն պատասխանը տրվել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից, Դատարանի մոտ տարակուսանք էր առաջացրել: Ավելին, Դատարանը հայցը բավարարել էր արագացված դատաքննության կարգով:

Գործերից մեկով<sup>26</sup> հայցվորը դիմում էր ներկայացրել քաղաքապետի որոշման հիման վրա պետական գրանցում կատարելու պահանջով, սակայն Կոմիտեն մերժել էր պետական գրանցման պահանջն այն հիմնավորմամբ, որ իրավահաստատող փաստաթղթեր չեն ներկայացվել: Այնինչ, Դատարանն արձանագրել էր, որ քաղաքապետի որոշումը հանդիսանում է իրավահաստատող փաստաթուղթ, որի հիման վրա պետք է կատարվեր հայցվորի սեփականության իրավունքի գրանցումը հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, մինչդեռ, ՀՀ կադաստրի կոմիտեն, պատճառաբանելով, որ հողամասի վերաբերյալ իրավունք հաստատող փաստաթղթեր չեն ներկայացվել, և տեխնիկական անձնագիրը սահմանված կարգով հաստատված չէ իրավասու մարմնի կողմից, ըստ էության, մերժել է իրավունքի գրանցումը: Դատարանի գնահատմամբ, գրությունը (մերժումը) միջամտում է հայցվորի իրավունքներին և ըստ էության, խոչընդոտում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրականացմանը, առավել ևս, որ տեղական ինքնակառավարման մարմնի անհատական ակտով ճանաչվել և վերականգնվել է Հայցվորի սեփականության իրավունքը, մինչդեռ վերջինս Կոմիտեի ոչ իրավաչափ մերժման հետևանքով զրկված է այն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ենթարկելու հնարավորությունից:

Մյուս դեպքում<sup>27</sup> հայցվորը ներկայացրել էր օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ իր համատեղ սեփականության իրավունքը գրանցելու համար: Կոմիտեն մերժել էր գույքի նկատմամբ հայցվորի համատեղ սեփականության իրավունքը գրանցելու պահանջը՝ պատճառաբանելով, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականում գծագրված հողամասի պարագծային չափերն ու մակերեսը չեն համապատասխանում կադաստրային քարտեզի տվյալներին: Մասնավորապես, Կոմիտեն ակտում նշել է, որ, համաձայն կադաստրային քարտեզի, հողամասի մակերեսը կազմում է 0.0752հա, մինչդեռ գրանցված է 0.076հա: Կոմիտեն առանց որևէ իրավական հիմքի է մերժել պետական գրանցումը՝ պահանջելով ներկայացնել օրենքով չնախատեսված փաստաթղթեր, մասնավորապես 0.076հա հողամասի իրադրության հատակագիծը՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից, և համապատասխան գրություն՝

<sup>26</sup> Տե՛ս գործ թիվ ՎՂ5/0191/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941265](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941265)

<sup>27</sup> Տե՛ս գործ թիվ ՎՂ/7538/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809924145](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809924145)

կադաստրային քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ կամ սեփականատերերի գրավոր համաձայնությունները՝ հողամասը պակաս չափով գրանցելու համար: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Կոմիտեն անհավասար մոտեցում է ցուցաբերել նույնանման փաստական հանգամանքներով վարչական վարույթներում, քանի որ մյուս համասեփականատերերի իրավունքը գրանցել էր՝ հաշվի չառնելով սեփականության իրավունքի գրանցման վկայականում գծագրված հողամասի պարագծային չափերի ու մակերեսի անհամապատասխանությունները:

Դատարանն իր հերթին արձանագրել էր, որ Կադաստրի տեղեկանքը չի պարունակում հղում այն իրավական ակտին, որի հիմքով տվյալ գործով Հայցվորին առաջադրվել է վերոնշյալ փաստաթղթերը (0.076հա հողամասի իրադրության հատակագիծը՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից և համապատասխան գրություն՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ կամ սեփականատերերի գրավոր համաձայնությունները՝ հողամասը պակաս չափով գրանցելու համար) ներկայացնելու պահանջը: Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտել է, որ Կադաստրը Հայցվորի համատեղ սեփականության իրավունքի գրանցումը մերժել է (չի կատարել)՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտմամբ:

Գործերից մեկով<sup>28</sup> լիազորությունների ոչ պատշաճ իրականացման, ինչպես նաև անձին օրենքով չնախատեսված պարտականություններով ծանրաբեռնելու մասին է վկայում այն, որ անձը դիմել է Կոմիտեին՝ պետական գրանցում կատարելու պահանջով: Կոմիտեի որոշմամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է այն պատճառաբանությամբ, որ Հայցվորի կողմից ներկայացված հատակագծում նշված կոորդինատներով հողամասը համադրվել է այլ ծածկագրերով հողամասերի և պետական սեփականություն հանդիսացող ճանապարհի հետ, և անհրաժեշտ է ներկայացնել ճշտված հատակագիծ: Հայցվորը ներկայացրել էր փաստարկ առ այն, որ Կադաստրային քարտեզում սխալների ուղղումը պետք է կատարի պատասխանող վարչական մարմինը, այլ ոչ թե քաղաքացին, քանի որ համադրման պատճառը ոչ թե Հայցվորի կողմից ներկայացված չափագրման սխալն է, այլ հենց Կոմիտեում առկա տեղանքի քարտեզի սխալն է, հետևաբար, եթե Կոմիտեում կազմված քարտեզը սխալ է, ապա վերջինս պարտավոր է ինքն իր միջոցներով ուղղում կատարել: Իսկ այդ սխալը չի կարող հանգեցնել գույքի պատկանելիության, մակերեսի կամ կադաստրային արժեքի փոփոխության:

Դատարանն էլ իր հերթին նկատել է, որ անշարժ գույքը մինչ այդ գրանցված է եղել մեկ այլ անձի անվամբ: Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի «Հողամասի հատակագիծը» հատվածում նկարագրված են եղել հողամասի սահմանները և չափերը, որոնք որևէ համադրություն չեն առաջացնում: Նշված անշարժ գույքը նույնությամբ նվիրատվության

<sup>28</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/11987/05/18, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809928999](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928999)

պայմանագրով փոխանցվել է Հայցվորին: Սակայն այս անգամ պետական գրանցում իրականացնելիս Պատասխանողը հայտնաբերել է համադրումներ այլ գույքերի հետ: Ակնհայտ է, որ նշված համադրումը առաջացել է կադաստրային քարտեզների տարբերությունից: Սա նշանակում է, որ խնդիրը տեխնիկական է և պետք է լուծվի կադաստրային քարտեզներում ուղղումներ կատարելու միջոցով:

Ընդ որում, կադաստրային քարտեզի նման ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը կամ չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության: Պատասխանողն այնպես պետք է կատարի հատակագծի փոփոխությունը, որ տեխնիկական համադրությունը վերանա ոչ թե մյուս գույքերի պակասեցման հաշվին, այլ դրանց հատակագծերի տեխնիկական ձևափոխման միջոցով: Արդյունքում կադաստրային հատակագիծը պետք է ստանա այն տեսքը, ինչպես որ բնության մեջ առկա է տվյալ անձանց պատկանող գույքը:

Նման պայմաններում կադաստրային քարտեզի փոփոխությունը համապատասխանում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգին, որը պետք է իրականացվի գրանցող մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքների սուբյեկտներին: Հայցվորը պարտավոր չէր ներկայացնելու լրացուցիչ որևէ փաստաթուղթ դրա համար: Նա միայն ներկայացնում է իրավահաստատող փաստաթղթերը, տվյալ դեպքում՝ նվիրատվության պայմանագիրը, իսկ Պատասխանողը պետք է կատարի անհրաժեշտ ուղղումները, որպեսզի ապահովվի Հայցվորի սեփականության իրավունքի իրացումը:

Մեկ այլ գործով<sup>29</sup> վարչական մարմինը էլեկտրական ենթակայանի նկատմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարել է այդ գույքի նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի առկայության պայմաններում: Դատարանն արձանագրել է, որ նման պայմաններում Կոմիտեն պարտավոր էր մերժել երրորդ անձ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը: Դատարանը նման եզրահանգման է եկել ապացույցների գնահատման, ինչպես նաև կադաստրային գործում առկա փաստաթղթերի հետազոտման արդյունքում: Դատարանը հաստատված է համարել, որ վեճի առարկա էլեկտրական ենթակայանի նկատմամբ երրորդ անձ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է այդ անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության՝ արդեն իսկ 1998թ. գրանցված սեփականության իրավունքի առկայության պայմաններում, որպիսի սեփականության իրավունքը վերը նշված՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 11.12.2001թ. վճռով փոխանցվել է «Երևանի թիվ 2 շուկա» ՍՊԸ-ի իրավանախորդ «Թիվ 2 շուկա» դուստր ձեռնարկությանը: Ըստ այդմ՝ «Երևանի թիվ 2 շուկա» ՍՊԸ-ն, որպես «Թիվ 2 շուկա» դուստր ձեռնարկության իրավահաջորդ, իրավասու է հանդես գալու խնդրո առարկա էլեկտրական

<sup>29</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/2851/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932896](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932896)

ենթակայանի նկատմամբ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտմամբ կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով:

Գործերից մեկով<sup>30</sup> Կոմիտեի որոշմամբ պետական գրանցման վարույթը կասեցվել է՝ պատճառաբանելով, որ դիմումատուի կողմից ներկայացված՝ նոտարի առուվաճառքի պայմանագրի և Երևանի քաղաքապետի որոշման համաձայն, դիմողին օտարվել է անշարժ գույքը, սակայն ըստ կադաստրային գործի նյութերի՝ վերջինս չի հանդիսանում նշված հասցեի անշարժ գույքի սեփականատեր (իրավատեր): Կոմիտեն հաշվի չի առել այն հանգամանքը, որ դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը սեփականության իրավունքը հաստատող՝ անհրաժեշտ և բավարար փաստաթղթեր են հանդիսացել, հետևաբար դրանցից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է եղել պետական գրանցման: Դատարանը տվյալ գործով արձանագրել էր, որ նշված իրավահաստատող փաստաթղթերում Դիմողի սեփականատեր նշված լինելու հանգամանքը տվյալ դեպքում չի կարող հիմք հանդիսանալ այդ փաստաթղթերից ծագող՝ դիմողի սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու համար, քանի որ Կոմիտեն միայն ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և չի կարող կասկածի տակ դնել ներկայացված իրավահաստատող փաստաթղթերի իրավաչափությունը կամ քննարկման առարկա դարձնել այդ փաստաթղթերի իրավաչափության հարցը, և բացի այդ բացակայել է ապացույց առ այն, որ իրավահաստատող փաստաթղթերը՝ առուվաճառքի պայմանագիրն ու Երևանի քաղաքապետի որոշումը սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած են ճանաչվել, որպիսի պարագայում գրանցող մարմինը՝ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ նշված վարչական ակտը և քաղաքացիա-իրավական պայմանագիրն իրավաչափ են (իրավաչափության կանխավարկած): Ստացվում է, որ Հայցվորը իսկապես հանդիսացել է գրանցվող անշարժ գույքի իրավատերը, սակայն Կոմիտեն կրկին կասկածի տակ է դրել վարչական ակտի իրավաչափությունը:

Դատարանն իր հերթին փաստել է, որ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի հարցին իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ ՀՀ Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը<sup>31</sup>:

<sup>30</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/0099/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809929856](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929856)

<sup>31</sup> տե՛ս, օրինակ, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրայրյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009թ. որոշումը:

Մեկ գործով<sup>32</sup> անձի դիմումի հիման վրա Կոմիտեն գրանցել է անձի սեփականության իրավունքը, սակայն գրանցված հողամասը չի տեղադրվել կադաստրային քարտեզում: Դատարանն արձանագրել է, որ դիմողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում կատարելու արդյունքում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում գրառում կատարելու հետ միաժամանակ Պատասխանողը պետք է գրանցված հողամասը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ տեղադրեր կադաստրային քարտեզում, որը, սակայն, չի կատարել: Հատկանշանական է նաև այն, որ հողամասը կադաստրային քարտեզում տեղադրելու պարտականություն ունենալու և այն չկատարելու փաստն ընդունվել և չի հերքվել նաև Պատասխանողի կողմից:

➤ **Վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը չապահովելը**

Չնայած վերը թվարկված գործերով ևս առկա են վարչական մարմնի կողմից վարչական վարույթում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը չապահովելու խնդիրները, սակայն կան գործեր, որտեղ առավել ցայտուն է արտահայտված հիշյալ խնդիրը:

Մասնավորապես, դիտարկված գործերից մեկով<sup>33</sup> ևս գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ներկայացված լինելու պայմաններում Կադաստրի կոմիտեն պետական գրանցում չի կատարել՝ պատճառաբանելով, որ վարչական վարույթը կարճվում է, քանի որ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ՝ անտեսելով այն փաստը, որ առկա է գործն ըստ էության լուծող դատական ակտ, որը պարտադիր ենթակա է կատարման: Այնինչ, Դատարանը ևս նկատել է, որ պատասխանող Կադաստրի կոմիտեի կողմից հիշատակված քաղաքացիական գործով առարկան այլ է, քանի որ այդ գործով հայցվորը խնդրում է առանձնացնել իրեն պատկանող հողատարածքը, իսկ Կադաստրին ուղղված դիմումով նման պահանջ չի ներկայացվել, այլ ընդամենը խնդրվել է կատարել իրավունքի պետական գրանցում, ինչն էլ վկայում է պատասխանող վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու և ակտ կայացնելու մասին: Ստացվում է, որ վարչական մարմինը պատշաճ չի ուսումնասիրել ներկայացված փաստաթղթերը, որի հետևանքով անհիմն մերժել է պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի՝ վարչական գործով վճռի առկայության պայմաններում հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը, իրավական որոշակիության սկզբունքի հաշվառմամբ, Դատարանը գտել է, որ վերոնշյալ վճռով վիճելի անշարժ գույքի նկատմամբ կատարված օգտագործման իրավունքի

<sup>32</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671)

<sup>33</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1877/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931806](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931806)

պետական գրանցման առ ոչինչ լինելու փաստը հաստատված լինելու պայմաններում միննույն անձանց միջև սույն գործով վերստին ապացուցման կարիք չունի, ինչը նշանակում է, որ ըստ էության այդ փաստը ճանաչելու առարկան ունեցող սույն գործով հայցը ենթակա է բավարարման:

Գործերից մեկով<sup>34</sup> Կոմիտեն ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով առոչինչ ճանաչած դատական ակտի հիման վրա կատարել էր իրավունքի պետական գրանցում: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ անդրադարձել է նախադատելիության ինստիտուտին՝ նշելով, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստերին:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները, փաստերը հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը, փաստերը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար, նախադատելիությունը օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս<sup>35</sup>: Նախադատելիության առանձնահատկությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությամբ, ինչը կարևոր նշանակություն ունի իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում՝ լայն իմաստով դատավարության մասնակիցների միջև ծագած հարաբերությունների կայունության համար: Դատարանն էլ իր հերթին բավարարել էր հայցը՝ արձանագրելով, որ մեկ այլ գործով ապացուցված փաստերը վերստին ապացուցման կարիք չունեն:

<sup>34</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/2854/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932873](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932873)

<sup>35</sup> տե՛ս թիվ ՎԴ/2991/05/09, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809418498](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809418498)

Գործերից մեկով<sup>36</sup> ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով դատարանը պարտավորեցրել էր Կոմիտեին գրանցելու Հայցվորի սեփականության իրավունքը: Այնինչ վճռի պահանջներն անտեսելով, Երևանի քաղաքապետարանը վիճելի անշարժ գույքը հանձնել էր այլ անձի օգտագործման, իսկ Կոմիտեն գրանցել էր օգտագործումից բխող իրավունքը: Կոմիտեն առնվազն լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ վարույթ չի իրականացրել, փաստաթղթերը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել, քանի որ ժամանակագրական առումով, տեսնելով, որ վճիռն ավելի վաղ է կայացվել, քան Երևանի քաղաքապետի պայմանագիրը, պետք է անվավեր ճանաչեր պետական գրանցումը, քանի որ այն ակնհայտորեն հակասում էր օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջներին: Դատարանն արձանագրել է, որ Երևանի քաղաքապետը վիճարկվող որոշումն ընդունել է՝ հիմքում չունենալով վիճելի անշարժ գույքը՝ «Երևանի հ. 141 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ամրացնելու վերաբերյալ Երևանի ավագանու համապատասխան որոշումը: Միաժամանակ վիճարկվող որոշումը Երևանի քաղաքապետը, լիազորելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, որոշմանը կից հավելվածում ներառված «Երևանի հ. 141 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել է այդ հավելվածում ներառված՝ վիճելի անշարժ գույքի, այդ թվում՝ 4911 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ անհատույց օգտագործման պայմանագիր, տնօրինել է իրեն սեփականության իրավունքով չպատկանող 296 քմ մակերեսով հողամասը՝ ի խախտումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի, ըստ որի՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Վերոհիշյալը հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետի որոշումը մասնակիորեն՝ 296 քմ մակերեսով հողամասի մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով անվավեր ճանաչելու համար:

Գործերից մեկով<sup>37</sup> Կոմիտեն մերժել է անշարժ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ պատճառաբանելով, որ դիմումը ներկայացվել է սահմանված 30 աշխատանքային օրվա ժամկետի ավարտից հետո: Մինչդեռ, գործով ձեռք բերված ապացույցների, մասնավորապես, նվիրատվության պայմանագրի, պետական գրանցում կատարելու վերաբերյալ դիմումի և այն մերժելու մասին որոշման ուսումնասիրությունը վկայել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված ժամկետը բաց չի թողնվել: Տվյալ պարագայում գործարքը՝ նվիրատվության պայմանագիրը, վավերացվել է 2015 թվականի հունիսի 6-ին, որը հանդիսանում է շարք՝ ոչ աշխատանքային օր, հետևաբար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30 աշխատանքային օրվա ժամկետի ընթացքը սկսվում է գործարքը

<sup>36</sup> տե՛ս գործ թիվ ՎԴ/5008/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809935196](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935196)

<sup>37</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/10353/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940778](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940778)



վավերացնելու պահից սկսած առաջին աշխատանքային օրվանից՝ 08.06.2015 թվականից (որը երկուշաբթի է) և ավարտվում է 18.07.2015 թվականին (համաձայն ՀՀ կառավարության 11.07.2015 թիվ 750-Ա «Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» որոշման՝ 2015 թվականի հուլիսի 13-ի աշխատանքային երկուշաբթի օրը տեղափոխվել է 2015 թվականի հուլիսի 18-ը՝ շաբաթ օր)։

Գործերից մեկով<sup>38</sup> բանկը հայցադիմումով փաստարկել է, որ պարտապանի սնանկության վարույթի շրջանակներում պարտապանին պատկանող, բանկում գրավադրված գույքի աճուրդ վաճառքում հաղթող է ճանաչվել և այդ հիմքով դիմել է Կոմիտե՝ իր սեփականության իրավունքը գրանցելու պահանջով։ Կոմիտեն պետական գրանցման վարույթը կասեցրել է, քանի որ անշարժ գույքը գրավադրված է եղել մեկ այլ անձի մոտ, ուստի անհրաժեշտ է եղել ներկայացնել գրավառուի համաձայնությունը կամ գրավի դադարեցման համապատասխան փաստաթուղթը։ ՀՀ կադաստրի կոմիտեն հայտնել է նաև, որ վիճելի գույքը պայմանագրով օտարվել է երրորդ անձին, ուստի այդ գույքի նկատմամբ, առանց այդ իրավունքի դադարեցման համար լրացուցիչ փաստաթուղթ կամ ծառայության վճար ներկայացնելու, անձի անվամբ գրանցված գրավի (հիփոթեքի) իրավունքի դադարեցում չի կարող իրականացվել, իսկ պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում կարող է կատարվել՝ պահպանելով գրավի իրավունքը։ Դատարանն արձանագրել է, որ Կոմիտեն հաշվի չի առել սնանկության վարույթի առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ խնդրո առարկա՝ Անշարժ գույքի նկատմամբ այլ անձի անվամբ գրանցված գրավի իրավունքը քննարկվող դեպքում չի կարող խոչընդոտ հանդիսանալ հիշյալ գույքի նկատմամբ Բանկի ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման համար, քանի որ ՀՀ սնանկության դատարանի «Գույքի նկատմամբ կիրառված արգելանքները և սահմանափակումները վերացնելու միջնորդությունը քննելու մասին» որոշմամբ վիճելի անշարժ գույքի նկատմամբ կիրառված բոլոր տեսակի արգելանքները և սահմանափակումները վերացվել են, որից հետո՝ անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագրով Բանկը որպես սեփականություն ձեռք է բերել հիշյալ գույքը։ Այսինքն՝ վիճելի անշարժ գույքը Բանկը ձեռք է բերել առանց որևէ սահմանափակումների։

Նման պայմաններում Դատարանը գտել է, որ ՀՀ կադաստրի կոմիտե ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ ՀՀ սնանկության դատարանի «Գույքի նկատմամբ կիրառված արգելանքները և սահմանափակումները վերացնելու միջնորդությունը քննելու մասին» որոշումը և անհատ ձեռնարկատերի ի դեմս սնանկության գործով կառավարչի ու «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիրը հանդիսանում են բավարար իրավահաստատող փաստաթղթեր անշարժ գույքի նկատմամբ առանց որևէ սահմանափակումների «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության

<sup>38</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/10849/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941435](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941435)

սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելու համար, հետևաբար հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

➤ **Ոչ իրավաչափորեն անձին օրենքով չնախատեսված պարտականությունների առաջադրում (փաստաթղթերի ներկայացման պահանջ)**

Նշված խնդիրը ևս զուգակցվում է վերը թվարկված վարչարարության մյուս խնդիրների հետ, քանի որ կոմիտեն, անձից պահանջելով օրենքով չնախատեսված փաստաթղթերի ներկայացում, խախտում է օրինականության սկզբունքը՝ միաժամանակ հաշվի չառնելով ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և կասկածի տակ դնելով վարչական մարմինների և դատարանների կողմից կայացված փաստաթղթերը:

Դիտարկված գործերից<sup>39</sup> երկուսով Կոմիտեն իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցրել էր այն հիմքով, որ անհրաժեշտ է ներկայացնել Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա թողարկված գլխավոր հատակագծի ուղղված տարբերակը՝ պատճառաբանելով, որ հողամասի փաստացի մակերեսը 221.2 քմ է: Փաստորեն վարչական մարմինը, պահանջելով ներկայացնել Երևանի քաղաքապետի որոշման և դրա բաղկացուցիչ մասը հանդիսացող՝ Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծի ուղղված տարբերակը, նման պահանջով ըստ էության գնահատել է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իր իրավասության շրջանակներում ընդունված վարչական ակտի իրավաչափությունը, որպիսի վարքագիծը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշմանը և դրանով արտահայտված իրավական դիրքորոշումներին: Երևանի քաղաքապետի որոշումը երբևէ վարչական կամ դատական կարգով չի վիճարկվել և իր իրավաբանական ուժը պահպանել է այն նույն բովանդակությամբ /այդ թվում՝ հողամասի հատակագիծը/, ինչ ներկայացվել է պատասխանողին՝ որպես իրավահաստատող փաստաթուղթ:

Դատարանը նման պայմաններում, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշման պահանջը, արձանագրել է, որ Պատասխանողը պարտավոր է կատարել իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի պահանջը, այլապես պատասխանողը, ի խախտումն ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1137 որոշման, կասկածի տակ է դնում իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտի բովանդակությունը՝ դրսևորելով ոչ իրավաչափ վարքագիծ: Մասնավորապես, հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ՀՀ Սահմանադրության ուժով վարչական ակտի չվիճարկման պայմաններում յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված վարչական մարմնի լիազորությունների շրջանակում, և այն ենթակա է կատարման: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ չվիճարկված վարչական ակտն

<sup>39</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/3765/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933873](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933873);  
ՎԴ/5474/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809935562](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935562)

իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը<sup>40</sup>: Տվյալ դեպքում բացակայել է Հայցվորի իրավահաստատող փաստաթղթի՝ համայնքի ղեկավարի որոշման ուժը կորցրած ճանաչելու կամ դատական կարգով վիճարկվելու վերաբերյալ որևէ ապացույց, ուստի նման պայմաններում որևէ անձ, այդ թվում՝ դատարանը չի կարող կասկածի տակ դնել դրա իրավաչափությունը:

Մեկ այլ վարչական գործով<sup>41</sup> անձը դիմել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու պահանջով: Կոմիտեի որոշմամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է այն պատճառաբանությամբ, որ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով ձեռք բերվող նախկինում մշտական օգտագործման տրամադրված հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն, ուստի անհրաժեշտ է ներկայացնել ձեռք բերված հողամասի համար իրավասու մարմնի կողմից թողարկված հատակագիծ: Մինչդեռ որևէ իրավական նորմով սահմանված չէ դատական ակտով՝ որպես հողամասի նույնականացնող փաստաթուղթ, մատնանշված հատակագիծը այլ տեսքով, քան վկայակոչված է դատական ակտում, ներկայացնելու դիմողի պարտականությունը: Այդ փաստաթղթի նույնականացման համար վճռում նշվել են անհրաժեշտ տվյալներ (կազմողի տվյալները և ամսաթիվը), որոնց համապատասխանող փաստաթուղթը լիովին բավարար էր, որպեսզի Կոմիտեն նույնականացնել վճռով մատնանշված փաստաթղթի հետ: Դատարանը չի հաստատել իր վճռով մատնանշված հատակագիծը, դիմողին նման պահանջ ներկայացնելն ակնհայտ ապօրինի է: Իսկ եթե վարչական մարմինն ունի կասկածներ տվյալ փաստաթղթի իսկության վերաբերյալ, վերջինս է պարտավոր ձեռնարկել միջոցներ իր կասկածները փարատելու ուղղությամբ՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված՝ հավաստիության կանխավարկածի սկզբունքի: Դատարանը ևս արձանագրել է, որ ի սկզբանե դիմողը կատարել է հողամասը նույնականացնող հատակագիծը ներկայացնելու իր պարտականությունը: Նա նույնիսկ պարտավոր չէր հետագայում դատական գործից օրինակ ներկայացնել Պատասխանողին: Սակայն Հայցվոր կողմը նույնիսկ դատական գործից է ձեռք բերել հատակագծի օրինակը և ուղարկել Պատասխանողին: Սակայն դա հաշվի չի առնվել ակնհայտ անհիմն փաստարկով առ այն, որ պետք է ներկայացվեր սպասարկման գրասենյակ: Դիմողը չպետք է ծանրաբեռնվի վարչական մարմնի ներսում կազմակերպական հարցերով, վարչական մարմնի խնդիրն է իր ստորաբաժանումների միջոցով ապահովել օրենքով սահմանված ընթացակարգերի ապահովումը:

<sup>40</sup> Տե՛ս Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը

<sup>41</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/0480/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930285](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930285)

Մեկ այլ վարչական գործով<sup>42</sup> Կոմիտեն կասեցրել էր գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը և վկայակոչելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը՝ նշել էր, որ ներկայացված իրավունքի պետական գրանցման համար ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի մակերեսը և որոշ գծային չափեր չեն համապատասխանում արդեն նախկին գրանցումներ կատարված հողամասի մակերեսին և գծային չափերին: Փաստորեն ստացվում է, որ հայցվորի կողմից դիմումին կից, հետագայում նաև Դատարան, ներկայացվել են իրավունքի պետական գրանցում կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները, մինչդեռ Կոմիտեն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթը կասեցրել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված իրավունքի պետական գրանցման համար ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի մակերեսը և որոշ գծային չափեր չեն համապատասխանում արդեն նախկին գրանցումներ կատարված հողամասի մակերեսին և գծային չափերին, սակայն պատասխանողը նման հիմքով իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու, առավել ևս փաստացի մերժելու իրավասություն չուներ, քանզի իրավունքի պետական գրանցումն իրականացվում է համապատասխան փաստաթղթերի հիման վրա, այլ ոչ թե այլ գործոններ հաշվի առնելով:

Դատարանն իր հերթին արձանագրել է, որ Կոմիտեն, լինելով միայն ծագած իրավունքները գրանցող մարմին, չէր կարող կասկածի տակ դնել ներկայացված փաստաթղթերի իրավաչափության հարցը և պարտավոր էր օրենքով նախատեսված պետական գրանցման վարույթի կասեցման հիմքերի բացակայության պայմաններում կատարել իրավունքի պետական գրանցում: Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վերոգրյալից հետևում է, որ միանման փաստական հանգամանքների առկայության դեպքում վարչական մարմինները պետք է դրսևորեն հավասար մոտեցում, այսինքն՝ եթե վարչական մարմինը նույնանման հանգամանքների դեպքում իրականացրել է որոշակի ձևի վարչարարություն /մոտեցում/, ապա վերջինս պարտավոր է միանման դեպքերում հետագայում նույնպես ցուցաբերել միատեսակ մոտեցում: Մինչդեռ սույն դեպքում նույն հողամասի նկատմամբ գրանցվել է այլ անձանց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իսկ Հայցվորի իրավունքի պետական գրանցում կատարելը կասեցվել էր՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ ներկայացված իրավունքի պետական գրանցման համար ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի մակերեսը և որոշ գծային չափեր չեն համապատասխանում արդեն նախկին գրանցումներ կատարված հողամասի մակերեսին և գծային չափերին:

<sup>42</sup>Տե՛ս գործ թիվ ՎԴ/6673/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936942](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936942)

➤ **Լսված լինելու իրավունքի խախտում**

Տվյալ խախտումն արձանագրվել է միայն մեկ դատավորի նախագահությամբ դատական գործերից 2-ով: Լսված լինելու իրավունքի խնդիրը Հայցվորների կողմից բարձրացված է եղել միայն գործերից 2-ով, որոնց դեպքում Դատարանը հաստատել է տվյալ խախտման փաստը:

Մեկ վարչական գործով<sup>43</sup> հայցվորը պնդել էր, որ Կոմիտեն պարտավոր էր իրավունքի պետական գրանցում կատարել միայն օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության պայմաններում, այնինչ դուրս գալով իր լիազորությունների սահմաններից, չունենալով գրանցման օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի միավոր, իր հայեցողությամբ և դիմողի ցանկությամբ կատարել է իրավունքի պետական գրանցում: Դատարանը տվյալ գործով արձանագրել էր, որ Պատասխանողի կողմից վարչական ակտի ընդունմանն ուղղված վարույթ իրականացնելիս խախտվել է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով ամրագրված անձի լսված լինելու իրավունքը, մասնավորապես պատասխանողի կողմից Հայցվորի սեփականության իրավունքով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի գրանցման վարույթում չի ներգրավել նախկին սեփականատիրոջը, որպիսի պայմաններում վերջինս զրկվել է իր սեփականության իրավունքով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի գրանցման վարույթում մասնակից դառնալու և լսվելու իրավունքից:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ Դատարանն արձանագրել է, որ Կոմիտեն չի կատարել օրենսդրորեն իր համար նախատեսված՝ երրորդ անձանց վարչական վարույթում մասնակից դարձնելու պոզիտիվ պարտականությունը, որի արդյունքում էլ խախտվել է Հայցվորի Սահմանադրորեն երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը, ինչպես նաև իր իրավունքները և օրինական շահերը շոշափող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթին մասնակից դարձվելու և լսված լինելու իրավունքը:

➤ **Ձևական պահանջները չարաշահելու արգելքի խախտում**

Մեկ վարչական գործով<sup>44</sup> հայցվորը դիմել էր Կոմիտեին՝ խնդրելով անշարժ գույքի սեփականության վկայականում կատարել փոփոխություն՝ ավելացնելով հայցվորի տվյալները՝ որպես համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված սեփականություն: Նշված դիմումի հիման վրա հարուցված իրավունքի գրանցման վարույթը կասեցվել է, քանի որ Կոմիտեի կողմից ոչ իրավաչափ կերպով հիմք չի ընդունվել ՔԿԱԳ մարմնի կողմից տրված ամուսնության ակտի վերաբերյալ տեղեկանքը: Վարչական վարույթի

<sup>43</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/2857/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932865](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932865)

<sup>44</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/5744/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936027](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936027)

նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայցվորը վարչական մարմինն ներկայացված համատեղ դիմումին կից ներկայացրել է ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից տրված ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանք՝ վավերացված նոտարական կարգով: Իսկ Պատասխանողի կողմից Հայցվորի ներկայացրած համատեղ դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ չի ներկայացվել ամուսնության վկայականի սահմանված կարգով վավերացված պատճենը: Դատարանը հաստատված է համարել, որ տեղեկանքը տրվել էր ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից, և այն պարունակում է ամուսնության վկայականի բովանդակությանը վերաբերող տվյալները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված է, որ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով: Վերոշարադրյալ իրավանորմերի՝ իրավական սկզբունքների համակարգային վերլուծության արդյունքում՝ վարչական մարմիններին արգելվում է այն պայմաններում, երբ անձանց կողմից բովանդակային առումով իրենց վրա դրված պարտականությունները կատարվել են, միայն ձևական պահանջների պահպանման նպատակներով ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց իրավունքները, բացի այդ, ի ապահովումն տվյալ սկզբունքի, օրենքով նախատեսվում է նաև առավելագույնի սկզբունքը, ըստ որի՝ այն պայմաններում, երբ անձանց կողմից ներկայացված փաստաթղթերը բովանդակային առումով ներառում են այլ անհրաժեշտ փաստաթղթեր չի թույլատրվում անձանցից պահանջել այլ լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

Մեկ այլ վարչական գործով<sup>45</sup> անձը դիմել էր սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջով՝ կից ներկայացնելով Երևանի քաղաքապետի որոշումը, որի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 8-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետով, ինչպես նաև ի թիվս այլ տեղեկանքների, հիմք ընդունելով նաև ընդհանուր համատեղ սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, դիմողի կողմից ինքնակամ իրականացված կառույցը ճանաչվել է օրինական: Մերժման հիմքում Կոմիտեն նշել է այն հանգամանքը, որ բազմաբնակարան բնակելի շենքի նկուղները հանդիսանում են տվյալ շենքի բոլոր միավորների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականությունը: Անդրադառնալով Կադաստրի

<sup>45</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/6114/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936385](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936385)

կոմիտեի վերը նշված կասեցման հիմքերին՝ Դատարանը գտել է, որ դրանք անհիմն են, քանի որ հայցվորը, ըստ էության, ներկայացրել է իրավունքի ձեռքբերումը հաստատող, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթղթերը, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետի որոշումը, որը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմնի անհատական ակտ, որով շենքի նկուղային տարածքը ճանաչվել է օրինական, և հաստատվել է, որ առկա են ընդհանուր համատեղ սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները:

Դատարանի գնահատմամբ Կադաստրի կոմիտեն պետական գրանցում կատարելու համար իր վարույթում ունեցել է օրենքով նախատեսված անհրաժեշտ և բավարար փաստաթղթերը և տեղեկությունները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի վարչական մարմինը վարչարարություն իրականացնելիս, մասնավորապես՝ վարչարարության օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, առավելագույնի, հավաստիության կանխավարկածի սկզբունքները:

#### ➤ **Կոմիտեի կողմից գործողությունը դադարեցված նորմի կիրառում**

Գործերից մի քանիսով Կոմիտեն մերժել է սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ պատճառաբանելով, որ նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման համար դիմումը ներկայացվել է նույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ: Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, որի պահանջը դիմողի կողմից չի կատարվել:

Այնինչ, Կոմիտեն հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1448 որոշմամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասն՝ այն մասով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքներն այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման ներկայացնելու պահանջը չպահպանելը՝ առանց ժամկետը բացթողնելու պատճառները հաշվի առնելու, հանգեցնում է գործարքի անվավերությանը, ճանաչվել է Սահմանադրության 60, 75 և

78-րդ հոդվածներին հակասող: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա գույքի, հատկապես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման օրինականությունը պատշաճ կերպով ապահովելու համար, նույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2019 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու նույն որոշման պահանջներին:

Այնինչ դիմումը ներկայացվել էր համապատասխան օրենսդրական փոփոխություններ դեռևս կատարված չլինելու պայմաններում, որպիսի պայմաններում դադարեցված է եղել 30 օրյա ժամկետ նախատեսող նորմերի գործողությունը: Տվյալ նորմերը ՀՀ իրավական համակարգում այլևս չգործող իրավական նորմեր են, այսինքն՝ ՀՀ իրավական համակարգում բացակայել է գործարքից ծագող իրավունքը պետական գրանցման ներկայացնելու համար սահմանված կոնկրետ ժամկետ և ըստ այդմ՝ այդ ժամկետը բաց թողնելու պատճառով իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմք<sup>46</sup>:

Հատկանշական է, որ այժմ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխությունները և նախատեսվել են 30-օրյա ժամկետի հարգելիության օրենսդրական հիմքերը:

➤ **Առաջին Վարչական ակտի հիման վրա պետական գրանցում կատարելը**

Մեկ վարչական գործով<sup>47</sup> անձը դիմել էր Աբովյանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի որոշումն առաջին ճանաչելու պահանջով, որպես հետևանք անվավեր ճանաչել նաև տվյալ որոշումից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը: Աբովյանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նիստի արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ Գործադիր կոմիտեն որոշել է համաձայնել գործկոմի բնակարանները որպես անձնական սեփականություն քաղաքացիներին սեփականաշնորհելու հանձնաժողովի առաջարկության հետ և ըստ կազմված ակտի՝ վեճի առարկա անշարժ գույքը հանձնել հայցվորին՝ որպես

<sup>46</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/1554/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809943841](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943841); ՎԴ/0106/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942238](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942238)

<sup>47</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/8845/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939303](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939303)




ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ սեփականություն: Անդամների կազմում ընդգրկվել է նաև երրորդ անձ, ում մասով, ըստ հայցվորի, որոշումն իրավաչափ չէր:

Դատարանն արձանագրել էր, որ վերջինիս մահացել է, ուստի իրավունակությունը դադարել է 23.04.1990թ.-ին, հետևաբար վերջինս ակնհայտորեն չէր կարող Աբովյանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 16.11.1995թ. որոշմամբ դառնալ վեճի առարկա անշարժ գույքի ընդհանուր համատեղ սեփականատեր: Հետևաբար, Աբովյանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ իրավունակությունը դադարած անձին տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Խնդիրն այն է, որ որոշումն ի սզկբանե առոչինչ է եղել, քանի որ որոշմամբ որպես համատեղ սեփականատեր է ընդգրկվել մահացած անձը, հետևաբար Կոմիտեն գրանցել է իրականության մեջ գոյություն չունեցող իրավունք: Կոմիտեն հաշվի չի առել, որ առոչինչ վարչական ակտը իրավաբանական ուժ չունի դրա կայացման պահից:

### 3. Կարճման որոշումներ

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել նաև ՀՀ կադաստրի կոմիտեի դեմ ներկայացված 55 կարճված գործերից 36-ը:

Նշված գործերից 30-ով (83%) հայցվոր է եղել ֆիզիկական անձը, 5-ով (14%)՝ առևտրային կազմակերպությունը, իսկ 1-ով (3%)՝ ոչ առևտրային կազմակերպությունը:




Նշված գործերից 26-ի դեպքում (72%) հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, 1-ով՝ ներկայացուցչի անունն առկա է եղել ՀՀ փաստաբանների պալատի կայքում, 5 գործով (14%) հայցվորը չի ունեցել ներկայացուցիչ, 1 գործով (1%)՝ ունեցել է օրինական ներկայացուցիչ, 1 գործով (3%)՝ ունեցել է այլ տեսակի ներկայացուցիչ:


Դիտարկված գործերը հիմնականում վերաբերել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմանը, գրանցումն անվավեր ճանաչելուն:

Գործերի գերակշիռ մասով (56%) կարճման հիմք է հանդիսացել Հայցվորի՝ հայցից հրաժարվելու հանգամանքը, 7-ի դեպքում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ վեճի ըստ էության սպառված լինելը, 7 գործով բացահայտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, 2 գործով լրացած է եղել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը:


Գործերից 12-ով տեղի է ունեցել երեք նիստ, 7-ով՝ երկու նիստ, 5-ով՝ մեկ նիստ, 4-ով 5-ից ավելի նիստ, 5-ով՝ հինգ նիստ, իսկ 3 գործով կայացել է չորս նիստ:



Դիտարկված գործերից 35-ով տեղի է ունեցել նախնական նիստ:




Դիտարկված գործերի շրջանակներում 22 նիստ չի կայացել՝ ներքոնշյալ հանգամանքներով պայմանավորված:



Դիտարկված գործերից ամենաերկարը տևել 1 տարի 6 ամիս 27 օր<sup>48</sup>: Մնացած գործերի տևողության ժամանակահատվածը եղել են շատ տարբեր՝ մինչև մեկ ամսից մինչև 1 տարի:

<sup>48</sup> Տե՛ս գործ թիվ ՎԴ/3408/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933453](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933453)



Դիտարկված գործերից 27 գործով ներգրավված է եղել երրորդ անձ, ընդ որում, բոլորը դատարանի նախաձեռնությամբ, որից միայն 20-ով է երրորդ անձ ներգրավելու մասին որոշումը հասանելի եղել դատալեքսում: Երրորդ անձ ներգրավելու համար դատարանի հիմնավորումը հիմնականում եղել է այն, որ երրորդ անձի իրավունքները անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով: Երրորդ անձանցից 21-ը չեն ապահովել մասնակցությունը դատավարությանը և չեն ներկայացրել որևէ դիրքորոշում:

Գործերից 5 ով այնուամենայնիվ Պատասխանողի վրա դրվել է պետական տուրքի վճարման պարտականություն, իսկ 1 գործով նաև իրավաբանական ծառայությունների համար ներկայացուցչի վճարի հատուցում՝ 50.000 ՀՀ դրամի չափով<sup>49</sup>:

Վարչարարության և դատական պրակտիկայի խնդիրները կարճված գործերով հիմնականում «տեսանելի» չեն եղել, քանի որ կարճված գործերի մասով տեղեկատվությունը որոշման մեջ սահմանափակ է ներկայացված եղել: Մասնավորապես, ներկայացված չեն եղել հայցի փաստական և իրավական հիմքերը, պատասխանողի դիրքորոշումները:

<sup>49</sup> Տե՛ս գործ թիվ ՎՂ/8185/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938552](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938552)

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կադաստրի կոմիտեի դեպքում բավարարված բոլոր գործերով առկա է եղել վարչարարության օրինականության սկզբունքի խախտումը, որը դրսևորվել է մի դեպքում վարչական մարմնի կողմից գործող օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները չիրականացնելով, մյուս դեպքում՝ գործող օրենսդրությամբ չնախատեսված գործողություններ կատարելով: Վարչարարության օրինականության սկզբունքի խախտումն անմիջականորեն կապված է եղել նաև վարչական մարմնի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չապահովելու հետ, որը հանգեցրել է անձի՝ օրենքով երաշխավորված սեփականության իրավունքի չիրացմանը:

Գործերից մեծ մասով ոչ իրավաչափորեն անձի առջև օրենքով չնախատեսված պարտականությունների առաջադրման (փաստաթղթերի ներկայացման պահանջ) խնդիրը ևս գուցակցվել է վերը թվարկված վարչարարության մյուս խնդիրների հետ, քանի որ կոմիտեն անձից պահանջելով օրենքով չնախատեսված փաստաթղթերի ներկայացում՝ խախտում է օրինականության սկզբունքը՝ միաժամանակ հաշվի չառնելով ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և կասկածի տակ դնելով վարչական մարմինների և դատարանների կողմից կայացված ակտը:

Ուսումնասիրությունում դուրս բերված վարչարարության խնդիրների մեծամասնությունը կապված են եղել հենց անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վարույթում հանդիպող խնդիրներին: Հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից իրականացվող վարչարարության առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ Կոմիտեն վարչական ակտերը կայացնում է բացառապես իրավահաստատող փաստաթղթերի հիման վրա, ստացվում է, որ վարչարարության խնդիրները կապված են եղել ոչ թե որևէ նորմի տարրնկալման կամ այլ ձևով մեկնաբանման կամ բովանդակային առումով վերլուծություն պահանջող խնդիրների հետ, այլ Կոմիտեի անփութության, փաստաթղթերի ոչ պատշաճ ուսումնասիրության, ձևական պահանջների չարաշահման սկզբունքի խախտման հետ:

Ուսումնասիրության արդյունքում դուրս բերված խնդիրների լուծման նպատակով.

Առաջարկում ենք.

- Ապահովել վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը՝ իրականացնելով գործող օրենսդրությամբ նախատեսված լիազորությունները,
- Ջերժ մնալ լիազորությունների վերազանցում թույլ տալուց՝ ոչ միայն խոչընդոտներ չստեղծելով անձի՝ օրենքով երաշխավորված իրավունքների պետական գրանցման համար, այլև ապահովել դրանց պատշաճ իրականացումը,
- Պետական գրանցման վարույթի շրջանակներում չպահանջել օրենքով չնախատեսված փաստաթղթերի ներկայացում, այդ թվում՝ հաշվի առնել և կասկածի տակ չդնել վարչական մարմինների և դատարանների կողմից կայացված օրինական ուժի մեջ գտնվող ակտերը,

- Պետական գրանցման վարույթն իրականացնելիս ապահովել փաստաթղթերի պատշաճ ուսումնասիրությունը, չպահանջել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր, որոնք ձեռք բերելու պարտականությունը օրենքով դրված է վարչական մարմնի վրա, ինչպես նաև զերծ մնալ ձևական պահանջները չարաշահելուց այն դեպքում, երբ բովանդակային առումով փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը կատարված է:

- Պարբերաբար ամփոփել դատական պրակտիկան և արձանագրված վարչարարության խնդիրները, ապահովել վարչարարություն իրականացնող անձանց իրազեկվածությունը դրանց՝ թույլ չտալու վարչարարության այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ առկա է հաստատված դատական պրակտիկա:

- Ապահովել վարչարարություն իրականացնող աշխատակիցների իրազեկվածությունը ոչ միայն ոլորտային իրավական նորմերին, այլ նաև կոնկրետ վարչական վարույթի առանձնահատկություններին առնչվող ընդհանուր կիրառելի իրավական ակտերին և դրանց փոփոխություններին: